№ 7 Հինգշաբթի Յունվարի 22 — 1887 — Հինգշաբթի Յունվարի 22 № 7

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1887** ԹՒԻՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք տեսական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցորենի առևտրի հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գանձակից. Նամակ Ատրպատականից. Նամակ Շուշուց. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թուրքայ Հայաստան. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՑՈՐԵՆԻ ԱՌՈՒՏՈՒՐԻ ՀԱՐՑԸ

Անհերքելի է որ այս րօպէիս մեր ցորենի առևտուրը և այդ բերքը դէպի օտար երկիրներ արտահանելու հարցը զբաղեցնում է ամենքին, հետաքրքրում է ամբողջ երկիրը։

Անուրանալի է որ դա շատ նշանաւոր տնտեսական խնդիր է Անդրկովկասի համար, որովհետև եթէ մեր երկիրը ամեն տարի կարողանար արտահանել ցորենի այն ահագին քանակութիւնը, որ արտահանվել է վերջին տարվայ ընթացքում,—այդ կը նշանակի որ Անդրկովկասի համար կը բացվի այսուհետև արտահանութեան, ուրեմն և հարստութեան մի նոր, մինչև այժմ չեղած աղբիւր.... Բայց հարցը նոյն իսկ դրա մէջն է՝ արդեօք այդ բերքի անցեալ տարվայ ահագին արտահանութիւնը բացառական է եղել, որպէս հետևանք մի շարք առատ տարիների, թէ նա կրկնվելու է և հետևեալ տարիները, դառնալով մեր երկրի համար արդիւնաբերութեան և եկամուտի մի սովորական աղբիւր։

Այդ տեսակ դժուար հարց վճռելու համար երկու ճանապարհ կայ. առաջին ճանապարհն է՝ սպասել համբերութեամբ ապագայի վճռին, որ ի հարկէ բուսական երկիւղալի ճանապարհ է և կարող է համարվել մի երկսայրի զէնք, իսկ երկրորդ ճանապարհն է՝ երկրում արդիւնաբերած և երկրից արտահանած ցորենի քանակութեան մասին ստացված թուանշանների հիման վրա ճիշդ հետազօտութիւն անել, որով կարելի կը լինէր պարզել՝ արդեօք մի տարվայ ընթացքում արտահանված ցորենի ահագին քանակութիւնը կազմում էր երկրի աղգաբնակութեան առօրեայ պիտոյքների համար աւելորդը, թէ ժողովուրդը այս կամ այն հանգամանքից ստիպված՝ ծախեց, արտահանեց մեր երկրից և իրան համար անհրաժեշտն էլ....

Մենք ունենք մեր ձեռքի տակ ճիշդ թուանշաններ մի տարվայ ընթացքում մեր երկրից արտահանած ցորենի ահագին քանակութեան մասին, բայց դժբաղդաբար չունենք թուանշաններ թէ ո՞րքան քանակութեամբ նոյն միջոցում, կամ դրանից առաջ մեր երկիրը արդիւնաբերեց ցորեն, որպէս զի իմանանք թէ բերքի յայտնի քանակութիւնը արտահանելուց յետոյ, արդեօք մնում է երկրի ներսում իրան սպառման, իրան ներքին գործածութեան համար բաւական քանակութեամբ ցորեն։

Արդէն մեր երկրի շատ տեղերից տեղեկութիւններ են գալիս թէ ցորենն ու գարին սկսում են զգալի կերպով թանգանալ։ Բայց դարձեալ դա ապացոյց չէ, ի հարկէ, որ ցորեն շատ քիչ քանակութեամբ է մնացել երկրի մէջ. դուցէ և շատ ցորեն դեռ ևս կայ մեր երկրում, չը նայելով որ շատ էլ արտահանվել է երկրից, միայն թէ երկրում մնացած ցորենը գտնվում է ոչ թէ գիւղացու, արդիւնաբերողի ձեռքում, այլ կապիտալիստների, չարչիների, միջնորդների ձեռքում։

Ցորենի արդիւնաբերողը գիւղացին է, նոյն գիւղացին նշանաւոր չափով և սպառող է նոյն բերքի։ Սպառողն է նոյնպէս և քաղաքային աղգաբնակութիւնը։ Իսկ երբ որ այս կամ այն պատճառով արդիւնաբերած այդ անհրաժեշտ բերքի մեծ մասը կենտրոնանում է միջնորդի, կապիտալիստի ձեռքում,—այն ժամանակ ցորենի գինը սկսում է բարձրանալ։

Գիւղական տարրի մասին, որպէս խորդէտ, անտես, հաշուող, քաղաքագէտ, հեռատես տարրի մասին խօսել անհնարին է։ Նոյն իսկ այն պատճառով գիւղացին այդ բոլոր լաւ յատկութիւնները ունենալ չէ կարող, որ նա ապրում է,—եթէ այսպէս կարելի է ասել՝ օրից օր, և շատ անգամ այս կամ այն նշանաւոր քայլն անում է ոչ թէ հեռատեսութեամբ հաշուելով իր արածը, այլ որովհետև այս կամ այն առօրեայ հանգամանքը նրան այս րօպէիս նեղում է. գիւղացուն հարկաւոր է առ ձեռն փող՝ կամ իր խսպառ քայքայված խրճիթը նորոգելու, կամ իր աղջկան մարդու տալու, նրա հարսանիքի պատրաստութիւնները տեսնելու ու պահանջող փեսացուին յայտնի գումար տալու, կամ, որ ամենադիւրաւորն է՝ հարկերը վճարելու։ Եւ նա այդ տեսակ նեղդրութեան մէջ կը ծախի ոչ թէ միայն իր բերքի աւելորդը, բայց և իր և իր ընտանիքի տարեկան գործածութեան համար անհրաժեշտն էլ։

Գիւղական տարրը չունի և չէ էլ կարող ունենալ լայն, հեռատես տնտեսական քաղաքականութիւն։ Նա ծախում է ցորենն այս րօպէիս, քանի որ իրան լաւ գին տալող կայ, ծախում է ոչ թէ միայն աւելորդը, բայց և անհրաժեշտը, կամ գոնէ անհրաժեշտի մեծ մասը, յուսալով որ փող ունենալով, նա միշտ կը կարողանայ, դուցէ և փոքր ինչ աւելի թանգ գնով, կրկին առնել ցորեն երբ իրան հարկաւոր կը լինի։ Բայց գիւղական տարրը ամեն տեղ, մանաւանդ մեր երկրում, այնքան անհեռատես է, որ երբէք չէ մտածում հետևանքների մասին. նա չէ մտածում որ փող էլ ունենալով, դուցէ իրան անհնարին կը լինի հարկաւոր ժամանակ կրկին առնել ցորեն, որովհետև իր ծախած ցորենի մի մաս արդէն արտահանվել է արտասահման, իսկ մնացած մասը, որ դուցէ և կազմում է այնպիսի մեծ քանակութիւն, որ բաւական կը լինէր ամբողջ երկրի տարեկան գործածութեան համար, ամբարված է միջնորդի, չարչիի, վաճառականի ամբարներում, որից կրկին իր առօրեայ պէտքերի, կամ ցանքսի համար գնելը գիւղացուն կը նստի ոչ թէ փոքր ինչ աւելի թանդ, բայց շատ աւելի թանդ, քան թէ նա կարծում էր....

Գիւղական տարրը չէ էլ մտածում և այն հանգամանքի վրա, որ մեր երկրի հաղորդակցութեան ճանապարհները շատ և շատ անկատար են, որ հացի թանգութեան ժամանակ կարող է պատահել որ մեր երկրի մի ծայրում ցորեն և ալիւր ահագին քանակութեամբ դիզված կը լինի, իսկ նոյն երկրի միւս ծայրին այդ անհրաժեշտ մթերքը շուտափոյթ հասցնելը, ճանապարհների բացակայութեան պատճառով, անհնարին կը լինի։

Բոլորիս յիշողութեան մէջն է թէ ինչպէս 1879 թվին, երբ Անդրկովկասում տիրեց թանգութիւն և նոյն իսկ սով, ցորեն և ալիւր դիզված էին ահագին քանակութեամբ ոչ թէ միայն Օդէսայում ու Վլադիկավկասում, բայց նոյն իսկ Թիֆլիսում, իսկ մի և նոյն ժամանակ Գանձակում ալիւրի պուդը արժէր 5—7 ռուբլի, Ագուլիսում ու Օրդուբաթում նոյն իսկ 9—11 ռուբլի....

Թողնելով մեր երկրի ճանապարհների բացակայութեան հարցը, մենք առ այժմ կը վերջացնենք մեր այս նկատողութիւնը կրկնելով՝ որ միայն այն ժամանակ վստահութեամբ կարելի կը լինի ասել թէ մեր երկրի ցորենի արդիւնաբերութիւնը մեզ համար շահաւէտ արտահանութեան և հարստութեան աղբիւր ու արդիւնագործութեան մի նոր ճիւղ կը համարվի, երբ ճշդութեամբ կը որոշվի այդ բերքի վերաբերմամբ մեր երկրի արդիւնաբերութեան ոյժը, այսինքն կը որոշվի թէ ո՞ր չափով երկրի համար անհրաժեշտ է պահել ցորեն նոյն իսկ երկրի ներքին գործածութեան համար,—իսկ այդ քանակութիւնից դուրս արդիւնաբերութեան աւելորդը միայն կը ներկայացնի տարեկան արտահանութեան երկրի իսկական կարողութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Յունվարի 10-ին

Ինչ էք կարծում, ընթերցող, լաւ միջոց չէ՞ նիսան նաղդելու և մի և նոյն ժամանակ «բարեբարի» անուն վաստակելու.... Ես, գոնէ, շատ եմ հաւանում պ. Նաբաթեանի այս նոր ձևի բարերարութեանը, և հաւատացած եմ, որ նա հետևողներ չատ կունենայ։ Եւ այդպիսով մեր բոլոր հասարակական հիմնարկութիւնները մեծ արդիւնքներ պիտի վաստակեն։ Եւ ճշմարիտ, ով ասէք որ նիսիա չունենայ. եթէ մեր լրագիրներն անգամ տարիներից ի վեր մի քանի հազար ռուբլի ապառիկներ ունեն, չեն կարողանում ստանալ,—էլ մեր հարուստների մասին ինչ ասել կուզէ...։ Բայց ահա պ. Նաբաթեան մի լաւ միջոց է գտել նիսիաները սաղացնելու, այն է նուիրելու այդ անյուսալի նիսիաները բարեգործական նպատակով։ Այժմ ամեն մարդ, որ բարերարութիւն անել է ուզում, կը դիմի այս կամ այն հիմնարկութեանը, առաջարկելով նրան իր նիսիաները ժողովել.... Ամեն մարդ որ անյուսալի նիսիաներ ունի,—այդպիսով միջոց կունենայ բարերարութիւններ անել....

Ասացինք որ պ. Նաբաթեանի նուիրած 88 ր. 75 կ. նիսիան, նրա յայտարարութեան համեմատ, մնում է ցորենի կոմիտեի դանձապահ պ. Լիսիկեանի մօտ։ Բայց այն խնդիրը պարզելու համար թէ արդեօք պ. Լիսիկեան ճշմարիտ պարտ է մատ թէ արդեօք պ. Նաբաթեանին թէ ոչ, հարկաւոր է վերադառնալ 1879 թվին սովի ժամանակ կազմված ցորենի կոմիտեի գործունէութեան պատմութեանը։

Երբ 1879 թվին սովը տիրել էր մեզ և Գանձակում ալիւրի պուդը հինգ, վեց, եօթ ռուբլով անդամ չէր ճարվում, նախկին նահանգապետ իշխան Զավչավաձէի առաջարկութեամբ գանձակեցիները՝ հայ և թուրք միասին, ժողովեցին մի խոշոր գումար, մինչև 11,000 ռուբլի. ինքը իշխանը նուիրեց միանուագ 200 ռուբլի, բացի դրանից հրամայեց քաղաքային գումարից առանց տոկոսի փոխ տալ 10,000 ռուբլի։ Այդպիսով հաւաքվեցաւ ընդամենը մօտ 21,100 ր., որով և սկսվեցաւ հացի առևտուրը։ Գործը աւելի կանոնաւորելու համար գումարատէրերից կազմվեցաւ ցորենի առևտրի կոմիտեա, որի պարտականութիւնն էր Թիֆլիսում, կամ ուր ձեռնտու կը լինէր, առնել հաց և Գանձակ նստած դներով առանց մի կոպէկ օգուտի վաճառել գլխաւորապէս աղքատ դասի վրա։ Այդպիսով կոմիտեի նպատակն էր թէ սովի առաջն առնելու և թէ ընդդիմադրել տեղիս «հալալխների» անսանձ կամայականութեան՝ հացի դները բարձրացնելու մէջ։ Կոմիտեի գործերը վարելու համար ընտրված էին երկու անփոփոխ գանձապահներ՝ պ. Լիսիկեան, որ և հաշուապահ էր, և Հաջի-Աբբաս, իսկ հաց առնելու և ծախելու համար անդամներից հերթով նշանակվում էին երկու հայ և երկու թուրք։

Ինչպէս առհասարակ մեր բոլոր ընկերական գործերը միշտ կաղէկաղ են ընթանում և վատ հետևանք ստանում, նոյնպէս էլ մեր կոմիտեի գործերում տեղի ունեցան շատ անճշդութիւններ և զեղծումներ հաց առնողների և ծախողների—ամբարդարների կողմից.... Ինչ և իցէ վերջացաւ սովը, վերջացաւ և ցորենի կոմիտեի գործունէութիւնը։ Հաշիւները քննելու և զեկուցում կազմելու համար նշանակվեցան հաշուատեսներ։ Գործից երևաց, որ թէև կոմիտեը երբէք ինքասով հաց չէ ծախել, բայց և այնպէս յիշած մի քանի անճշդութիւններից և անաջող հանգամանքների պատճառով կոմիտէը դեֆիցիտ է ունեցել աւելի քան 20%։

Քաղաքային գումարից վերցրած 10,000 ր. լիովին վերադարձնելուց յետոյ, մնացեալ առձեռն գումարը բաժանվեցաւ անդամների մէջ։ Ինչ կարծիք, որ վերոյիշեալ վնասները պարզելուց յետոյ կոմիտեի անդամներից և ոչ ոք չէր կարող լիովին յետ ստանալ այն գումարը, որը դրծի սկզբում դրել էր ցորենի առևտրի համար, այլ նրանցից ամեն մէկը ստացաւ իր դրած գումարից 20% պակաս և այդ պակասորդից մինչև այժմս ոչ ոք մի կոպէկ անգամ չէ ստացել և, հաւանական է, որ չը պիտի ստանայ էլ երբէք, քանի որ պարտականներից ոչ ոք իրան մեղաւոր չէ ճանաչում և հաշուատեսների զեկուցումը առ ոչինչ համարում, վասն որոյ կրած դեֆիցիտը ինչպէս մնացել է, նոյնպէս էլ կը մնայ անդամների վրա։

Պ. Նաբաթեան, կոմիտէի անդամներից մէկը լինելով, ի հարկէ, ուրիշների պէս յետ է ստացել իր դրած գումարը միմիայն 20% պակաս և, ինչպէս երևում է նրա նամակից, պակասորդը հասնում է 88 ր. 75 կոպէկի։ Հէնց այդ չարաբաստիկ 88 ր. 75 կ. ապառիկն է, որ պարոնը եօթը տարուց յետ իր մատեանից ջնջելու համար մի նոր ձևի բարերարութիւն է հնարում և դրանով թէ իր նիսիան նաղդած համարում և թէ գիմնազիայի պ. դիրեկտորի և ուրիշների աչքում «բարերարի» տիտղոսը վայելելու ձգտում....

Մեր առաջ բերած մանաւոր տեղեկութիւններից ընթերցողը տեսաւ, որ ցորենի կոմիտէի դանձապահ պ. Լիսիկեանի վրա պ. Նաբաթեան ոչինչ ապառիկ չէ թողել, այլ նա կոմիտէի բոլոր անդամների հետ միասին զանազան անաջող հանգամանքներից վնաս են կրել հացի առևտրի մէջ և թողել են ապառիկներ, որոնց համար բոլորովին պատասխանատու չէ դանձապահը, այլ ամբողջ կոմիտէը, կամ այն անդամները, որոն

ՍՎԱԶԱՍԱՅ ԿՈՄՈՂ

ղոգրիտ Ն

:տուցատամ ղ դատարի ղտեռնտա Ն՝ ասյ Ամատամ-սկ—ՀՀՆՈՒՅՆ Ն՝ Ն՝ Ն՝

վաճառական Ա. Ավրիկեանի անունից կեղծ նամակ և փոխանակագիր շինելով, Մոսկվայի մի ինչ որ գործարանատէր Մէղվէդեվի գործակատարի կեղծ անունով՝ ստացել է ներկայ ամսի 10-ին 350 ռուբլի նոր-բայազէտցի Բաղդասար Ավրիկեանցից և այդ փողը ստանալուց յետոյ անմիջապէս անյայտացել է Թիֆլիսից: Ասում են որ գործը արդէն յանձնված է քննիչին:

—

ԹԻՖԼԻՍԻ ջրանցքի շինութիւնը արդէն բաւական առաջ է գնացել: Արդէն քաղաքային վարչութիւնը մշակում է այն կանոնները, որոնցով պէտք է քաղաքի բնակիչները օգտվեն ջրանցքի ջրից:

—

Ամսիս 18-ին, ԹԻՖԼԻՍԻ առաջին գիմնազիայի աշակերտները նոյն ուսումնարանի շինութեան մէջ տուին մի աշակերտական ներկայացում՝ ֆրանսերէն լեզուով:

—

Ամսիս 17-ին Թիֆլիսի «Լօնդօն» կոչված հիւրանոցում տեղի ունեցաւ մի ընկերական խնջոյք, որով Խարկովի համալսարանի նախկին ուսանողները, որոնք այժմ Թիֆլիսումն են բնակվում, տօնեցին յիշեալ համալսարանի գոյութեան 83-ամեակը: Ճաշկերոյթի ուրախ տպաւորութեան տակ շատերը ոգեորված ճառեր ասացին:

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Անդրկովկասեան շրջանը Կովկասեան կառավարչութիւնից բաժանելու հարցը սկզբունքով վճռված է: Մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն:

—

ԳԱՆՁԱԿԻ մեր թղթակցից, որի նամակն էլ տպվում է «Մշակի» ներկայ համարում, այսօր ստացանք հետեւեալ նամակը: «Այս բօպէիս խմացայ թէ պ. Նարաթեան, տեղական ռուս լրագիրներից «Մշակում» արտատպված լուրը Գանձակի գիմնազիային արած իր նուիրատուութեան մասին կարդալուց յետոյ, անմիջապէս միւս օրը ուղարկել է Ն ի ս ի ա նուէրի փոխարէն՝ նաղդ փող 88 ր. 75 կ., որը դիրեկտորին գրած իր առաջին նամակով պարոնը առաջարկել էր Լիսիկեանից ստանալ: Այժմ պ. Նարաթեան ուղարկելով իր մնացած 88 ր. 75 կ., ուրեմն լրացնելով իր առաջ ուղարկած 11 ր. 25 կ., ասում են, դիտաւորութիւն ունի հերքելու տեղական լրագիրներում սկզբից տպված լուրը, հաւատացնելով որ նա 100 ռուբլի միանգամից էր ուղարկել:»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Ահա երկրորդ տարին է, որ այստեղ ճրագալոյց երեկոյեան յօգուտ ուսումնարանի «Աւետիք» են մանդալիս: Այս տարի հոգաբարձուները երկու խմբի բաժանվելով՝ ժողովեցին մինչև 180 ռուբլի: Ինչպէս լսում է, հոգաբարձուները չեն ուզում բաւականացած լինել դրանով: Բացի նրանից, որ պատրաստականութիւն են յայտնել իրանք ևս մի մի բան նուիրել, այլ և մտադիր են մի քանի միջոցների ևս դիմել, որ այս տարի անպատճառ «Մարիամեան» դպրոցի շինութեան թերութիւնները լրացնեն:»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Հասարակական կեանքի մէջ ոչինչ աչքի ընկնող մխիթարիչ բան չէ նշմարվում. նոյն անտարբերութիւնը, նոյն եսականութիւնը, նոյն առանձնացած կեանքը: Հասարակական կրթիչ հիմնարկութիւններից քաղաքը զուրկ է. ուսումնարանը՝ միակ հիմնարկութիւնը, որի վրա կարելի է մատնացոյց անել բարոյակրթական տեսակէտից, շատ կղզիացած է: Շատերին սիրելի, շատերի սրտի մօտիկ ուսումնարանը, շատերից անտարբերութեան է մատնված. ինչու,—որովհետև իրանց ցանկացած Մարկոսի տեղ Կիրակոսն է տեսուչ, բարեկամ Յովհաննէսի տեղ՝ Մարտիրոսն է ուսուցիչ, հարևան Կարապետի տեղ՝ Մինասն է հոգաբարձու:»

—

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ. «Եօթ տարի շարունակ Նուխին պ. Զազուլեվսկուն գաւառապետ ունենալուց յետոյ, վերջապէս արժանացաւ մի այլ գաւառապետի՝ պ. Սիլիչին: Նորեկ գաւառապետի մասին առհասարակ լաւ են խօսում:»

—

Կովկասեան սարերի վրա, ինչպէս հաղորդում է փօստային վարչութիւնը, այս օրերս շատ ձիւն էր եկել և մի երկու օր շարունակ այն աստիճան սաստիկ փոթորիկ էր անում, որ անհնարին եղաւ ճանապարհները իստակել: Այդ պատճառով յունվարի 19-ին Ռուսաստանի փօստը եկած չէր Թիֆլիս:

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ հացը ղգալի կերպով շարունակում է թանգանալ: Ներկայումս, ինչպէս հաղորդում է «Нов. Обозр.» լրագիրը, առաջին տեսակ ալիւրի պուդը վաճառվում է մինչև 1 ր. 30—40 կ., իսկ դարու պուդը՝ մինչև 55—60 կոպէկ:

—

Յօգուտ «Հայուհեաց Բարեգործական» ընկերութեան տրվելի պարահանդէսը, որը պէտք է կայանար փետրվարի 1-ին, յետաձգված է: Պարահանդէսը կը կայանայ փետրվարի 12-ին, Թիֆլիսի ժողովարանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆ

—

Թուրքաց-Հայաստանի մէջ իրերի դրութիւնը աւելի ու աւելի ծանրանում է: Վանը դարձել է խառնակութիւնների և յուզմունքների մի կենտրոն: Անդադար քանտարկվում են նորանոր մարդիկ: Դեկտեմբերի 16-ին, ինչպէս հաղորդում են արտասահմանի հայոց լրագիրները, Վանի կիրակնօրեայ վարժարանի բոլոր աշակերտներին հաւաքեցին և բանտարկեցին: Մի քանի ժամից յետոյ փոքրերին քննութեան ենթարկելով, և նոցա անմեղութիւնը տեսնելով արձակեցին, բայց մեծերը շարունակում են տանջվել բանտի մէջ: Դ. Օգեան, Մ. Նաթանեան, Դ. Պէօզիկեան, Ռ. Շատուրեան, Ա. Ախիկեան, և Յ. Քանքանեան դեռ ևս բանտի մէջն են, որտեղ ենթարկվում են ամենածանր զրկանքների: Կէս ամսից աւելի է, որ բանտարկված են, և դեռ կանոնաւոր քննութեան չեն ենթարկված, որպէս զի կարելի լինէր խմանալ թէ ինչի մէջ է մեղադրում դրանց այստեղի փաշան: Մասնութիւնների չնորհիւ խուզարկութիւնները անդադար տեղի են ունենում:

Ալէքսէեան Գրիգորիս եպիսկոպոս արդէն Վան է: Սրբազանը մի քանի անգամ քարոզներ խօսեց խաղաղասիրական ընաւորութեամբ: Նա իր առաջին քարոզը դեկտեմբերի 12-ին խօսեց Վանի ս. Պողոս եկեղեցում. յարձակվեցաւ Վանի խառնակութիւնների պատճառ եղողների վրա: Գրիգորիս եպիսկոպոսը ջանք է գործ դնում հաշտեցնելու Պողոսեան և Ապօղոսեան կուսակցութիւնները: Ս. Յակոբ եկեղեցու մէջ մի քարոզ ևս խօսեց, մի ութեան հրաւիրելով բոլորին: Ալէքսէեանի քարոզները լաւ տպաւորութիւն են թողնում, և գուցէ մի հետեանքի հասցնեն, եթէ դրդումների, կասկածների և մատնութիւնների չնորհիւ յուզմունքը աւելի չը լարվի:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, 10 յունվարի

Դաւրէժում հաստատվել է կանանց ընկերութիւն, որը նիւթապէս օգնում է օրիորդաց դպրոցի չքաւոր աշակերտուհիներին: Ընկերութեան պարագլուխն է օրիորդաց դպրոցի ուսուցչուհի տ. Վարսենիկ Յակոբեանց, որի չնորհիւ այդ ընկերութիւնը հաստատվեց: Ընկերութեան իւրաքանչիւր անդամը տարեկան պէտք է վճարի 5 կամ 10 ռուբլի: Ընկերութիւնը ընտրել է մի քանի հոգաբարձու, որոնց չնորհիւ այդ գործը պէտք է առաջանայ: Հաւաքված դրամով չքաւոր աշակերտուհիների համար դպրոցական առարկաներ պէտք է առնվեն: Այդ ընկերութեան չնորհիւն էր, որ բողոքականաց դպրոցում ուսանող աշակերտուհիք այժմ հայոց դպրոցներում են ուսանում, և կարելի է ասել որ ընկերութեան անդամները օրից օր բազմանում են, չնորհիւ գործունեայ հոգաբարձուների: Օրիորդաց դպրոցը բաղկանում է չորս դասարաններից, և ունի մօտ 50 աշակերտուհիք, որոնք ուսանում են՝ հայոց լեզու, ընդհանուր և հայոց պատմութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն և ձեռագործ: Դասատուք են՝ տ. Վ. Յակոբեանց, պ. Ա. Աֆթանդիլեանց և պ. Ներսէս Յակոբեանց: Բացի Ներսի թաղի օրիորդաց դպրոցից կայ մի օրիորդաց դպրոց ևս Դրսի թաղում, կամ «Վիլայում», որի աշակերտուհիք այս տարի բաւական բազմացել են, որովհետև «Վիլայ» թաղի չքաւոր օրիորդաց մեծամասնութիւնը մինչև անցեալ տարի ուսանում էին բողոքականաց դպրոցում, բայց այս տարի բերվեցան հայոց դպրոցը՝ չնորհիւ սրբազան Ստեփաննոս Մխիթարեանցի: Դրսի թաղի ուսուցիչներն են՝ Յ. Խօջամիրեան, Ն. Ադամեան, Ա. Տէր-Եսայեան և Յ. Յարութիւնեան: Այդ ուսուցիչներին են պարտական «Վիլայի» դպրոցները իրանց առաջադիմութեամբ: Բացի ուսուցչութիւն անելուց նրանք ներկայացումներ էլ են տալիս յօգուտ դպրոցների: «Վիլայ» թաղում կայ մի ընթերցարան, որը այս տարի փոքր ի չատէ կանոնաւոր դրութեան մէջ է:

Դեկտեմբեր ամսի 30-ին Դաւրէժի հայերը մի մեծ կորուստ ունեցան՝ վախճանվեցաւ աղա Արզուման Նաղարբէկեանց, որի մահը Դաւրէժի հայերին մի մեծ տրամութիւն պատճառեց: Հանդուցեալը թաղվեցաւ «Վիլայ» թաղի եկեղեցու բակում: Թաղման օրը մեծ բազմութիւն կար և նոյնպէս ներկայ էին Դաւրէժի օտար հիւպատոսները: Այդ անձը երկար ժամանակ հոգաբարձութեան և վաճառականասիրութեան պաշտօն է վարել Դաւրէժում, և մեծ ժողովրդականութիւն ունէր Դաւրէժի հասարակութեան մէջ:

Զ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պոլսի հայ լրագիրները հաղորդում են, որ Պոլսում Նորերս Եսայեան եղբայրների տանը մի հացկերոյթ տրվեցաւ ի պատիւ Լօնդօնի պարսից դեսպան հայազգի Մելքոն խանի: Հացկերոյթին ներկայ էին Պոլսի յայտնի հայերից շատերը:

—Յունվարի 10-ին Փարիզում, պ. Ժան Պրուսալի մի հրապարակական դասախօսութիւն կարդաց վաճառականական Աշխարհագրական ընկերութեան մէջ, խօսելով Հայաստանի և հայերի մասին՝ պատմական, աշխարհագրական, տնտեսական և քաղաքական տեսակէտից:

—Յունաստանում պարլամենտական ընտրութիւնները վերջացան և Տրիկուպիսի կուսակցութիւնը կատարեալ յաղթութիւն տարաւ: Դեղիանիս բոլորովին յաջողութիւն չունեցաւ:

—Բերլինից եկող լուրերը շատ յուզող են. բօրսայում տիրապետում է յուզմունք. բոլոր արժէթղթերի գները ընկան: Քաղաքական շրջաններում խօսում են և պնդում են, որ Բիսմարկ իշխանը բացատրութիւն է պահանջել Բերլինի ֆրանսիական դեսպանից այն պատրաստութիւնների համար, որոնք տեսնվում են Ֆրանսիայի և Գերմանիայի սահմանների վրա: Բերլինում համոզված են, որ Բիսմարկ պնդում է որ քանի որ Բուլանժէ չրանսիական պատերազմական մինիստր է, խաղաղութիւնը երկու հարևան պետութիւնների մէջ ապահովված չէ կարող լինել:

—Բելգիայում բանտորների մէջ նորից շարժումներ սկսվեցան:

—Ֆրանսիական պատերազմական մինիստր Բուլանժէ, վերջին ժամանակ տարածված յուզիչ լուրերի առիթով յայտարարեց, որ այդ լուրերը անհիմն են:

—Ցանկօվի նշանակութիւնը Պոլսում, ինչպէս երևում է, բաւական մեծանում է. նա օրերումս մեծ-վիզիրին ներկայացրեց մի յիշատակագիր, որի մէջ պարզում է իր հայեացքները և ցոյց է տալիս այն միջոցները, որոնցով կարելի է համարում վերջ տալ բօլգարական բարդ խնդրին: Մեծ-վիզիրը ցանկութիւն է յայտնել ուշադրութեան առնել Ցանկօվի կարծիքները:

—Լուրեր են տարածվում, որ Անգլիան ուզում է Համիլտոն նաւահանգիստը յանձնել Չինաստանին, դրա հետ բարեկամական սերտ յարաբերութիւններ հաստատելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բաղդադում նորերս մի 13 տարեկան հայ աղջիկ յանկարծ անյայտացաւ. ծնողները երկար ժամանակ որոնելուց յետոյ իմանում են, որ աղջկան խափել և իր մօտ է տարել քաղաքի կառավարչական մի պաշտօնեայի որդին: Ծնողները պահանջում են իրանց զաւակին, իսկ նոքա մերժում են և աղջկանը ուղարկում Գաւրի մօտ: Տեղական Մեսրոպ հայ քահանան ինքը դիմում է Գաւրին, պահանջելով աղջկան, բայց մերժում է տանում: Գործին միջամտում է ֆրանսիական հիւպատոսը: Բայց կուսակալը վախանակ աղջկան ծնողներին յանձնելու, հրաւիրում է հայ քահանային՝ ներկայ լինել աղջկայ մահմեդականացնելու արարողութեանը: Քահանան հրաժարվում է, և աղջիկը ընդդիմութիւն է ցոյց տալիս կրօնափոխ լինելու: Մօտ մի ամիս է, որ աղջիկը Թուրքերի մէջերում ծածուկ պահվում է՝ և թէ ինչ դրութեան մէջ է, հնար չը կայ իմանալու:

* *

Դեկտեմբերի 25-ին Բօլգարիայի Ֆիլիպօպօլ քաղաքում, ժամի երեքին ճաշից յետոյ, «Ժողովրդական ձայն» անունով լրագրի խմբագիր Մանչօվի տունը մտան երեք ժանդարմ, նրան ձերբակալելու համար: Ժանդարմները յայտնեցին, որ Մանչօվ դաւաճան է, և խնամակալութեան հրամանով պէտք է ձերբակալվի: Մանչօվի կինը, տիկին Մանչօվ, ընդդիմացաւ, և չէր թոյլ տալիս ձերբակալելու իր մարդուն: Երբ ժանդարմը նրան հրեց և ուզում էր մինչև անդամ խփել տիկին Մանչօվին, նա վերցրեց ատրճանակը և կրակեց ժանդարմների վրա: Սրանք վախեցան և իսկոյն յետ փախան: Մի ժամից յետոյ ժանդարմները 30-ի չափ օգնականներով նորից եկան, և տեսնելով որ տան դռները և պատուհանները ամրացրած են՝ պաշարեցին տունը: Եկան և զինուորներ.... Այն ժամանակ տիկին Մանչօվ մօտեցաւ պատուհանին և անդադար կրակում էր ատրճանակը պաշարողների վրա. իսկ ամուսինը կանգնած նրա մօտ՝ լցնում էր ատրճանակը: Ժանդարմները և զինուորները նոյնպէս կրակում էին հրացաններ: Երկու հարիւրից աւելի զնդակ արձակեցին տիկին Մանչօվի վրա, բայց ոչ մէկն էլ չը դիպաւ: Կռիւը շարունակվեցաւ երկու ժամ: Ութ զինուոր և ժանդարմ վիրաւորվեցան.... վերջապէս ոյժը յաղթող հանդիսացաւ. պաշարողները յարձակումով տունը վերցրին, և տիկին Մանչօվ արիւնաթաթախ ընկաւ, անկարող լինելով դիմանալ որի հարուածներին: Զինուորները շատ ծեծեցին և պ. Մանչօվին, և նա էլ ուշաթափ ընկաւ... Երեկոյեան դէմ, բերդապետի հրամանի համաձայն, երկու քաջ ամուսինները տարվեցան հիւանդանոց....

* *

Հետաքրքրական է իմանալ մի քանի երկիրների թագաւորների տարիքը, մանաւանդ որ ընդունված է այն կարծիքը, թէ տարիքը մեծ աղդեցութիւն ունեն մարդու մտաւոր և գիտական ոյժերի վրա: Գերմանացոց կայսր Վիլհելմ՝ 89 տարեկան է. Հռոմի Լէօն XIII պապը՝ 76 տարեկան. Հոլանդիայի թագաւոր՝ Վիլհելմ՝ 69 տարեկան. Դանիայի թագաւոր Քրիստիան՝ 68 տ., Մեծ-Բրիտանիայի թագուհի Վիկտորիան՝ 67 տ., Սաքսոնիայի թագաւոր՝ Ալբերտ՝ 58 տ., Շվէդիայի և Նորվէգիայի թագաւոր Օսկար՝ 57 տ., Աւստրիացոց կայսր Ֆրանց-Յովսէփ՝ 56 տ., Բելգիայի թագաւոր Լէոպոլդ՝ 51 տ., Պորտուգալիայի թագաւոր՝ Դոն-Լուիս՝ 48 տ. Բուլգարիայի թագաւոր Կարլոս՝ 47 տ., Չերնոգորիայի իշխան Նիկոլայ՝ 45 տ. Թուրքաց Սուլթան՝ Աբդուլ-Համիդ՝ 44 տ. Իտալացոց թագաւոր Հումբերտ՝ 42 տ. Ռուսաց կայսր Ալէքսանդր III-ը՝ 41 տ. Յունաց թագաւոր Գէորգ՝ 40 տ. Բավարիայի թագաւոր Օտտոն՝ 38 տ. Սերբիայի թագաւոր Միլան՝ 32 տ. Սպանիացոց թագաւոր Ալֆոնս XIII-ը կէս տարեկան:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի: Մուրհակների կուրսը սաստիկ ընկաւ. Լօնդօնի վրա՝ $22^{1}/_{16}$ մինչև $22^{3}/_{82}$, Բերլինի վրա $187^{3}/_{4}$, Փարիզի վրա՝ $233^{1}/_{2}$, ոսկին 8 ր. 96 կ.

ԲԵՐԼԻՆ, 19 յունվարի: Անգլիական պաշտօնական «Morn. Post» լրագիրը, մի յօդուածում, որի վերնագիրն է «Արի բերանը», ասում է, որ ֆրանսիական պատերազմական մինիստր Բուլանժէի դրութիւնը, որի հրաժարականը անհրաժեշտ էր համարվում խաղաղութեան պահպանութեան համար, ոչ միայն հաստատուն եղաւ, այլ և դարձաւ անմատչելի: Բուլանժէ չէ կարող գործել խաղաղասիրաբար: Նա, իր ազդեցութիւնը որ աւելի մեծ է, քան Թիերի և Գամբէտտայի ազդեցութիւնը, կարող է պահպանել միայն պատերազմական կրքերը վառ պահելով: Ֆրանսիան զինաւորվում է տենդային կերպով և Բուլանժէի ուժից բարձր է Ֆրանսիային խաղաղ ճանապարհով տանել:

ԼՕՆԴՕՆ, 19 յունվարի: «Ռէյտերի գործակալութիւնը» հեռագրում է Բոմբէյից, որ Դուրանիների ցեղը, յունվարի 8-ին (ն. տ.) յարձակումով պաշարեց Կալա-Աբդալա ամրութիւնը, որը գտնվում է Խօջենի մօտ, այն նպատակով, որ սպանեն բրիտանական դիպլոմատական տեղական ներկայացուցչին և Կվետի երկաթուղու գլխաւոր երկրաչափին: Սակայն այդ անձինքը այդ միջոցին այնտեղ չէին: Դուրանիները սպանեցին խանին և նրա թիկնապահներից հարիւրին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի: «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ մաքսային տուրքերի վերաքննութիւնը չուտով տեղի կունենայ: Լուր է ստացված բանաստեղծ Նադսոնի մահվան մասին, որ մեռել է երկկ Եալտայում:

ԽԱՐԿՕՎ, 20 յունվարի: Օրլովի քաղաքային բանկի մէջ տեղի ունեցած դեղծումների քննութիւնը վերջացրած է: Գործը կը քննվի Խարկովի դատաստանական պալատում մարտի 3-ին:

ԼՕՆԴՕՆ, 20 յունվարի: Արտաքին գործերի մինիստրի օգնականը համայնքների ժողովում հերքեց այն լուրը, որ Լօնդօնի կաբինէտը ուղարկել է

Վիէննայի կաբինէտին մի հեռագիր, խոստանալով օգնել Աւստրիային Ռուսաստանի դէմ պատերազմելիս։

ՎԻԷՆՆԱ, 20 յունվարի։ Մինիստրների խորհուրդներում վճռված է մի քանի միջոցներ ձեռք առնել աւստրօ-ունգարական զօրքի պատերազմական ոյժերը աւելի մեծացնելու համար։ Արտաքին գործերի մինիստրութեան օրգան՝ «Fremdenblatt» ասում է. որովհետև, ի նկատի ունենալով Եւրոպայի ընդհանուր դրութիւնը, որը վերջին ժամանակ աւելի վտանգաւոր կերպարանք է առել, պէտք է չարունակել միջոցներ ձեռք առնել՝ աւստրօ-ունգարական զօրքը աւելի ուժեղացնելու համար, ուստի կարիք կայ մեծ դումարի, այդ պատճառով, ինչպէս երևում է, հարկ կը լինի դումարել պատգամաւորների ժողովը։

ՊԵՇՏ, 20 յունվարի։ Մինիստր-նախագահը յայտարարեց պատգամաւորների ժողովում, որ Աւստրօ-Ունգարիայի դիմաւորվելը՝ պատերազմի պատրաստութիւն չը պէտք է համարել, այլ նախազգուշութեան մի միջոց այն դէպքերի համար, երբ, հակառակ կառավարութեան կամքին, Եւրոպայի այժմեան դրութիւնը առաջ կը բերի պատերազմ։

Կ. ՊՕԼԻՍ, 20 յունվարի։ Այստեղ հասան Գրեկօվ և Սոֆիլով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ Խօսելով Բօրսայի մէջ տիրող յուզմունքի մասին, «Journal de St. Pétersbourg» լրագիրը նկատում է, որ այդ յուզմունքն ու երկիւղը բացատրվում է առայժմ միմիայն լրագրական յօդուածներով։ Ճշմարիտ է որ սպառազինվելը կատարվում է տենդային արագութեամբ և զգուշաւորութիւնը, որով այդ զինաւորվելը կատարվում է, կարող է կասկածների տեղիք տալ, իսկ ինքն կասկածը կարող է իր կողմից ընդհարումն առաջ բերել։ Բայց կառավարութիւնների իմաստութիւնը նոյն իսկ այդ տեսակ դրութեան հասկանալու մէջն է և արդէն շատ անգամ ամեն կառավարութիւնները յայտնել են որ ոչ ոք պատերազմ չէ ցանկանում։

ԺՈՒՐԺԵՎՕ, 21 յունվարի։ Վերջին ժամանակները լուրեր են տարածվել, որ բուլգարները սկսում են խռովութիւն ծագեցնել Մակեդոնիայում, ուր Սօֆիայից ուղարկվել է Ռիժով, զինաւորված հրասախմբեր կազմակերպելու նպատակով։ Իսկ Զախարի Ստոյանով գտնվում է Բէլգրադում։ Հաւաստի աղբիւրներից տեղեկացնում են այստեղ, որ սերբական կառավարութիւնը գործոն մասնակցութիւն ունի Մակեդոնիան ապստամբեցնելու մէջ, ուր և ուղարկում է պատերազմական մթերքներ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունվարի 21-ին

Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 22 պէնս.
— — Համբուրգի վրա — $186\frac{1}{2}$ պֆ.

— — Փարիզի վրա —	$232\frac{3}{4}$	սան.
Ոսկի — արժէ —	9	— կ.
Մաքսային կուպօններ — . .	174	75
Արծաթ — — — . . .	1	44
Բօրսային դիսկօնտներ — . .	$5\frac{1}{4}$ և	$6\frac{1}{2}$%
Պետական. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99	87
— — — — 2-րդ —	99	50
— — — — 3-րդ —	99	—
— — — — 4-րդ —	99	—
— — — — 5-րդ —	99	—
— — — — 6-րդ —	99	—
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	98	25
— — 2-րդ —	98	25
— — 3-րդ —	98	50
Ներքին 5% առաջին փոխառութ.	237	75
— երկրորդ —	228	75
$5\frac{1}{2}$% բէնտա	103	25
Ոսկեայ բէնտա.	186	—
Նոր կոնսոլիդած փոխառութիւն. .	157	50
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	158	25
$5\frac{1}{2}$% գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի.	97	—
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	102	50
— — Պոլտավայի— —	101	25
— —Պետ.Տուլսկ.— —	102	—
— — Կիևվի — —	101	75
— — Մոսկվայի — —	102	87
— — Բեսարաբ. Տավր.—	100	50
— — Նիժ. Սամար. —	102	—
— — Վիլնայի —	101	—
— — Թիֆլիսի—27 և 43 տ. —	—	—
—Քութայիսի-18 և 43 տ. —	—	—
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	563	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	268	75
Բիբինսկ-Վոլոգդի ընկ.	97	75
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	94	12
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	95	25
Օդէսայի — — .	92	—
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	—	—
Նոր երկաթուղային բէնտա . .	98	50
Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը	—	—
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	99	—

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄԵՂՐԻ. Ա. Վ. Ստեպանը ձեր ուղարկած 16 բուբլի Ռաֆայէլ Պատկանեանին հասցնելու համար։

ՕՐԴՈՒԲԱԹ. Ս. Տ. Պ. «Մշակի» բոլոր համարները ձեզ ուղարկված են։

ԿԱՐՍ. Խ. Մ. «Մշակը» ձեզ ուղարկված է անմիջապէս ձեր առաջին նամակը ստանալուց յետոյ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամներին, որ կիրակի, ամսոյս 25-ին, առաւօտեան 11 ժամին, քաղաքային տան դահլիճում նշանակված է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ՝ քննելու և հաստատելու համար ներկայ 1887-ի նախահաշիւը։

1—2

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

Հինգշաբթի, յունվարի 21-ին, **ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ** հայ դրամատիկական ակումբի խումբը մասնակցութեամբ տ. Գոհարիկի, պ.պ. Ադամեանի և Կիւրեղեանի կը ներկայացնի **ՈՒՐԻԷԼ ԱԿՈՍՏԱ**, դրամա հինգ գործ. հեղին. Գուցկովի։ Ակոստայի դերը կը կատարէ պ. Ադամեան։

Սկիզբն է 8 ժամին։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

հայոց եկեղեցական ծիսական ուսումնարանների երրորդ ու չորրորդ տարիների համար կազմած

„ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ“

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ։ Գրքոյկը, որ բաղկացած է 56 երեսից, պարունակում է իր մէջ՝ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԸ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ և ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻՆՆԵՐԸ։ Գինն է 20 կոպէկ։ Գումարով առնողներին զիջում կը լինի։ Ծախվում է հրատարակչի՝ Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։ Կարելի է դիմել նաև ինձ հետևեալ հասցէով. Тифлисъ.—Авлабаръ. учителю Ованесу Назарянцъ. Ց. Նազարեանց։

1—2

14—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց)։

Ստացված է՝ Մալց-էկսարակտ և հաղի համար կօնֆեկտներ՝ «Մի հաղիր»։ Զկան իւղ՝ մաքրած և ոչ-մաքուր. Պրօվանսի ձէթ, քացախի էսէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐԹԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕՍԼԱՑ, լեղակ՝ փոշիով և գունտերով. բծեր հանելու դեղեր, կօշկաներկ և վերնիճ կօշիկների համար. սամավարը և առհասարակ մետալեայ գործիքները սրբելու իւղ և փոշի։ ՇՎԵՅԻԱԿԱՆ ԳՐԵՖՍԲԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՅԿԻ, և տնտեսութեան ուրիշ պարագաներ։ Լէնգիլի թիատենու բալզամը. թիատենու կրէմ. Էմուլսիա և Էնգլունտի կօսմետիկան սրբիչներ, երեսի և մարթու թարմութիւնը պահպանելու համար։ Կինունէնի էլէօպատ մազերը սնդացնելու համար։

Դեղատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒԻ նրա բաժանմունքում։

ԹՈՓԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՔՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 բ. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյն պէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 բ. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մասնաւոր թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 բ. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կօսմէտիկական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։

Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», դերադանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 բ. 60 կ.

Քինին-զվիցերիական պօմադ պերուական բալզամից, մազերը սնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 բ. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 բ. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա դանվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 բ. 50 կ. առանց վրձինի 1 բ. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 բ. Ներկը «Բիս Գուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Դրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

78—100

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՓԼՏԻՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար։ Արկղիկի գինը 1 բ. 50 կ. Արկղիկի $\frac{1}{4}$ արժէ 60 կ.։

Հեղուկ բաղնիքների դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 բուբլի։

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Դօրակի գինը 1 բ. 20 կ. գուտապերչի մեքենան առանձին. $\frac{1}{2}$ դօրակ 65 կ.

Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց։ Դօրակի գինը 1 բուբլի։

Կուղբի ճարպի օծուն, պահում է խանութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը։ Գինը 75 կոպ.

Մազերի ներկ, սև, շագանակագոյն և շէկ։ Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը՝ պահում են մինչև վեց շաբաթ։ Ներկված մազերը չէ կարելի զանազանել բնական մազերից։ Արկղիկը 3 բուբլի։

Բիս. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Դրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

36—100

„ДОНСКАЯ ПЧЕЛА“

годъ (XII)

Какъ и въ теченіи минувшихъ одинадцати лѣтъ, будетъ выходить два раза въ недѣлю, по четвергамъ и воскресеньямъ.

Цѣль газеты—служеніе интересамъ Приазовскаго края: разработка вопросовъ, касающихся экономической жизни этого края, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія явленія и мѣстныя новости.

Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей—въ „Донской Пчелѣ“ имѣетъ всегда обширное мѣсто.

Торговый отдѣлъ „Донской Пчелы“, въ которомъ помѣщаются коммерческія свѣдѣнія, доведенъ до самыхъ широкихъ размѣровъ. Онъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ „Донская Пчела“ уже успѣла получить достаточную популярность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

Подписная цѣна:

Съ доставкою въ Ростовѣ на-Дону.		Съ пересылкою иногороднимъ.	
на годъ	6 р. —	на годъ.	7 р.
„ полгода.	3 „ 50	„ полгода	4 „ —
„ 3 мѣсяца.	2 „ —	„ 3 мѣсяца.	2 „ 50

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи „Донской Пчелы“, въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ Гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

ПРЕМІЯ. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20-го Декабря сего 1886 года подписныя деньги за 1887 годъ, будетъ разосланъ БЕЗПЛАТНО Донско-Азовской русско-армянскій календарь на 1887 годъ, въ которомъ, кромѣ общекалендарныхъ многочисленныхъ свѣдѣній, помѣщены также „Нахичеванъ на-Дону, его прошлое и настоящее“, съ литографированнымъ схематическимъ планомъ города, полнымъ Адресъ-календаремъ городовъ: Ростова, Нахичевана, Таганрога, Новочеркаска, Маріуполя и проч. и проч.

Редакторъ-Издатель И. А. Тер-Абраміанъ.

1887 թվին

(ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ԱՐԶԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

Կը հրատարակվի մի և նոյն դիրքով և պրոգրամայով։
Տարեկան բաժանորդագինն է. . . 5 բուբլի։
Կէս տարվանը . . . . . 3 բուբլի։

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենտրոնական գրավաճառանոցում»։

Օտարաքաղաքացիք դիմում են. Тифлисъ, въ редакцію «Ардзаганкъ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagank»։

Ապառիկ բաժանորդներ չեն ընդունվում։

Առանձին համարները 10 կոպէկով։

Խմբագիր-Հրատարակիչ. ԱՐԳԱՐ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ 21 Января 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.